ձեռս բերել ըստ կարելւոյն զղանազան թղթեանս և դյիշատակարանս, և հաւաքեալ զայնոսիկ ըստ պատշաճի իրացն՝ կարգաւ դասաւորեալ խմբեցի 'ի մի զքաղաքականս և զկրօնականս, զվէճս և զդատաստանական խնդիրս ընդ օտար ազգիս, վաստակեալ 'ի սմին ամս իբր վեց, եւ զգործն բաժանեցի յերկուս Հատորս. ոչ 'ի պարծանս ինչ անձին, և կամ 'ի ժառանգել զանուն և զփառս պատմագրի, այլ կէտ նպատակի կալայ զօգուտ և զբարգաւաճանս բանասիրաց ազգիս՝ ընտրելով ինձ ոճ միջակ դիւրամատչելի եւ հասկանալի։

Ընթացք գործոյս ուրեք ուրեք ընդ միջեալ կասին յիւրոց անխոտոր շաւղաց՝ առ 'ի նուազութենէ նիւթոց եւ կարեւոր բանից. զի չեղեւ հնար անընդհատ գլխաւորել զայն մինչ 'ի վախճան իւր. ուստի հարկ 'ի վերայ կայր թողուլ զայնս առ յապա՝ առաւել ճարտար և հմտութեամբ ճոխացեալ մտաց աշխատութեան, ածել յերեւան զարգասիս այսոցիկ բարեաց, 'ի խոյզ եւ 'ի խնդիր լինելով այսպիսի ցանկալի իրաց, 'ի լրումն բաղձանաց ազգիս։

Աղբիւրք՝ յորոց քաղեալ բովանդակեցաւ ժամանակագրական Պատմութիւն Սուրբ Երուսաղէմի, են՝ տոհմային Մատեանք՝ գրչագիր և տիպ. Պատմութիւն Հայոց. Հ. Մ. Չամչեան, Տիպ 'ի Վենետիկ։ Տիեզերական Պատմութիւն Հ. Ց. Գաթրճեանի, Տիպ 'ի Վիեննա։ Պատմութիւն Տիեզերական Ժողովոց։ Յովսեպոս Երբայեցի, Գիրք յաղագս պատերազմացն Հրէից։ Մարինոս Սանուտոյ Լատին. Պատմութիւն Ս. Երկրին, ձեռագիր։ Իւնս էլ Ճէլիլ Արաբացի, Պատմութիւն Երուսաղէմի և Քեբրոնի, որ և կոչի Թարիխ էլ Համիլէ. բազմաթիւ հրովարտակք, տուեալ 'ի Սուլթանացն Եգիպտոսի և 'ի Բարեխնամ Կայսերաց Օսմանեան հզօր պետութեան. Հէյոճէլիք, իլամք, մազպահայք, պույրուլթիք կուսակալաց. մուրասալայք, աղերսագիրք, արձանագրութիւնք դատաստանական քննութեանց, պատճէնք երեւելի արձանագրութեանց Հայեցի և Արաբացի՝ դրոշմեալ 'ի քարինս և 'ի բարաւորս դրանց. յիշատակարանք և կոտորք թղթոց. հարուստ նամականիք եւ կոնդակք, այլովքն հանդերձ։